

ՆԱԽԱԳԱՀ ԱՍՍԵ ԸՆԴՈՒՆԵՑ ՊԵՐՐԻՆ

Խորհրդարանի նախագահ Նեպիի Պրորի երեկ Դամասկոսի մէջ տեսակցեցաւ Սուրիոյ նախագահ Պաշշար Ասատի հետ: Ասատ հաւաստեց, որ Սուրիա միշտ պօրավիզ պիտի կանգնի Լիբանանի մինչեւ որ ապստամբութիւն բռնագրաւեալ հողերը եւ տիրանայ իր ջուրերուն ամբողջական իրաւունքին:

Հանդիպումէն ետք հրապարակուած հաղորդագրութեան համաձայն, քննարկուած են իսրայիլեան շարունակական սպառնալիքները եւ վերջերս ծագած Ուազլանիի եւ Հասպանիի ջուրերուն հարցը:

Սուրիոյ մէջ Պրորի հանդիպումը մը ունեցաւ նաեւ փոխ նախագահ Ապտէլ Հալիմ Սատտամի հետ, ինչպէս նաեւ Լիբանան վերադարձին տեսակցութիւն ունեցաւ Լիբանանի մէջ սուրիական ուժերու պատասխանատուներէն՝ Վալի Բանասանի հետ:

ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ԱՄՐԱՊՆԳԵԼ ՄԻԱՄՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

ՎՃՍԵ ԶՕՐ. ԼԱՅՈՒՏ

Նախագահ Վոր. Էմիլ Լահուտ երէկ վերահաստատեց իր վստահութիւնը՝ Լիբանանի ապագային եւ շրջանային մարտահրաւերները յաջողութեամբ դիմագրաւելու անոր կարողութեան հանդէպ. «որովհետեւ լիբանանցիներուն ջանքերով մեծամասնութիւնը այժմ համոզուած է, որ հայրենիքին փրկութեան միակ ուղին ամուր միութիւնն է:

Ատման Ֆարէսի գլխաւորութեամբ լիբանանցի գործարարներու պատուիրակութիւնը ընդունած պահուան նաեւ նկատել տուաւ, որ այս հանգրուանին հրամայական է, որ բոլոր լիբանանցիները խիտ պահեն իրենց շարքերը, «որովհետեւ շրջանային պարագայները կը հարկադրեն, որ ամբարշտեանքներ քին բեմը եւ չտարւիւնք լիբանանեան ընկերութեան բոլոր խաւերուն օգուտ չունենող կողմնակի հարցերով»:

«Երկրին վայելած քաղաքական եւ ապահովական կայունութիւնը կարմիր գիծ մըն է, Վոր ոչ ոք պիտի կարենայ շրջանցել, որովհետեւ պետութիւնը իր բոլոր կառոյցներով վճռած է յառաջ տանիլ իր երթը, պաշտպանելու սահմանադրութեան երաշխաւորած քաղաքացիներուն իրաւունքները, արդար, վճռական եւ հաւասար ձեւով օրէնքներով»:

սար ձեւով օրէնքներու գործարարութեամբ, այլապէս պիտի վերահաստատուէր երաշխաւորութեան կոնցրետներուն եւ թաղերու պատերազմներուն», ըսաւ ան:

Նախագահ Լահուտ նաեւ հաւաստեց, որ կորսուած պիտի ըլլայ ամէն գրաւ, որ կը դրուի այս կամ այն հարցին շուրջ պետութեան բարձրաստիճան պատասխանատուներուն միջեւ անհամաձայնութեան վրայ, որովհետեւ անիկա արգելուած է՝ նկատի առնելով, որ շատ սուղ գին կը վճարէ երկիրը, մինչ անոնց համաձայնութիւնը շատ օգտակար է երկրին, իսկ վերջերս լիբանանցիք կը նկատեն, թէ մեծ յառաջդիմութիւն արձանագրուած է սեղանի վրայ դրուած հարցերու եւ թղթածրարներու գծով պետական պաշտօնատարներու վերաբերումին մէջ, որ ցոյց կու տայ, թէ անոնք օրէնքին, թափանցիկութեան եւ ապագային պատասխանատուութեան գիտակցութեամբ յատկանշուող միացեալ կեցուածք որդեգրած են: «Այս մտայնութեամբ պետութիւնը կը մօտենայ տնտեսական հարցերուն, մասնաւոր 2003 տարւան պետական պիտուէի նախագիծին եւ ապապետականացումներուն, որոնց մասնակցելու առիթը պիտի տրուի բոլոր մեծ հաստատութիւններուն, ըլլան անոնք տեղական թէ միջազգային, բայց պետութեան իրաւունքներն ու պետական գանձարկի շահերը պահպանող յստակ պայմաններով», աւելցուց ան:

Հանրապետութեան նախագահը վերահաստատեց անհրաժեշտութիւնը՝ համայնքային նկատառումներէ վերջ պահելու ներքին քաղաքական շարժումները եւ քաղաքական հարցերը չխառնելու տնտեսութեան, որովհետեւ ուժեղ Լիբանանը անցեալի տկարացաւ եւ նահանջեց շրջանային եւ միջազգային բեմերուն վրայ իր դիրքէն, որովհետեւ հզօրացաւ համայնքայնութիւնը եւ պայն շահագործողները հասան քաղաքականութեան, տնտեսութեան եւ ապահովութեան, բայց Լիբանանը Եջ 9

ՄԻՆՉ ՈՒԱՇԻՆԿԱԹԸՆ ԵՒ ԼՈՆՏՈՆ ԹԵՐԱՅԱՄԲՍ ԿԸ ՄՆԱՆ

ՌՈՒՄԻԱ, ՉԻՆԱՍՏԱՆ ԵՒ ՖՐԱՆՍԱ ՈՂՋՈՒՆԵՑԻՆ ՊԱՂՏԱՏԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ՄԱԿԻ ՎԵՆՔԻ քննիչները վերընդունելու Իրաքի որոշումը ողջունեցաւ շրջանային ու միջազգային երկիրներու կողմէ, որոնցմէ սակայն Միացեալ Նահանգներ թերահաւատութեամբ ընդունեցին իրաքեան որոշումը, մինչ արաբական երկիրները՝ ողջունելով հանդերձ, տակաւին պատերազմի մը մտավախութիւնը ունին:

Իրաքի նախագահ Սատտամ Հիւսէյն, որ ճնշումի տակ էր, ենթարկուելու համար ՄԱԿի որոշումներուն, Երկուշաբթի գիշեր յայտարարած էր, թէ պիտի վերընդունի ՄԱԿի քննիչները:

Միացեալ Նահանգներ, որոնք անփոփոխ կը պահեն Սատտամ Հիւսէյնի իշխանութիւնը տապալելու իրենց կեցուածքը, խանդավառութեամբ ընդունեցին Իրաքի որոշումը՝ դիտել տալով, որ Սատտամ վստահելի անձ մը չէ: Սպիտակ Տան բանբեր Սքոթ Մքքլելըն ըսաւ, որ Իրաք խուսանաւորութիւն կը դիմէ՝ յուսալով, թէ պիտի ապստի Ապահովութեան խորհուրդին կողմէ որդեգրուելիք խիստ բանաձեւէ մը: Բանբերը աւելցուց, որ Իրաքի որդեգրած ռազմավարութիւնը պիտի ձախողի: Ան ըսաւ նաեւ, թէ Ապահովութեան խորհուրդը խիստ որոշումներ պիտի տայ Իրաքի հանդէպ:

Միացեալ Նահանգներու Էլեմուտքի նախարար Փոլ Օնիլ իր կարգին ըսաւ, որ Սատտամ Հիւսէյն «ստախօս» է: Ան շեշտեց, որ Իրաքի նախագահը պէտք է իշխանութենէ հեռացուի, հակառակ անոր որ արտօնած է քննիչներուն վերադարձը: Օնիլ դիտել տուաւ, թէ Իրաքի մէջ իրամայական պահանջ է վարչա-

կարգի փոփոխութիւնը: Սպիտակ Տան մէկ պաշտօնատարը ըսաւ, որ Պուշ Բոնկրէսին եւ ՄԱԿին կոչ կ'ուղղէ շարունակելու Իրաքի դէմ ճնշումները, որոնք այս հանգրուանին պէտք չէ մեղմանան:

Ուաշինկթօնի գլխաւոր դաշնակից Բրիտանիա եւս խանդավառութեամբ ընդունեց Իրաքի որոշումը: Ներքին գործոց նախարար Տէյվիտ Պլանքեթ ըսաւ, որ Վորուշ պէտք է ըլլաւ, որ պէսպի Սատտամ Հիւսէյն ամբողջ աշխարհը չխաբէ: Արտաքին գործոց նախարար ձէք Սթրո իր կարգին ըսաւ, որ թերահաւատութեամբ պէտք է ընդունիլ Իրաքի քայլը, որովհետեւ Սատտամ Հիւսէյն տասներկու տարիէ ի վեր կը խաղայ ամբողջ աշխարհին հետ:

Բրիտանացի քանի մը երեսփոխաններ սակայն չեն բաժնէր իրենց կառավարութեան տեսակետը ու կը պահանջեն ողջունել տանց նախապայմանի քննիչներուն վերադարձը արտօնելու որոշումը:

Միւս կողմէ, ՕԹԱՆԻ ընդհանուր քարտուղար ձորձ Ռոպրթսըն ողջունեց Իրաքի որոշումը դիտել տալով սակայն, որ Սատտամ Հիւսէյնի որդեգրելիք միջոցառումները աւելի կարեւոր են քան խօսքերն ու խոստումները: Ռոպրթսըն շեշտեց, որ Սատտամի գործն է կարեւորը:

Ան աւելցուց, որ Իրաքի հարցը սեփականութիւնն է ՄԱԿի եւ թէ այս հանգրուանին ՕԹԱՆ առնչակից չէ ու դերակատարութիւն չունի:

Շար.՝ Էջ 10

ՅՈՒՆԱՍՏԱՆ – ԹՈՒՐԻՔԻԱ ՄԵՐՁԵՑՄԱՆ ՔԱՅԼԵՐ

Յունաստանի եւ Թուրքիոյ միջեւ յարաբերութեանց ջերմացումի նոր ցուցանիշով մը, երկու երկիրները Երկուշաբթի օր ՄԱԿի մէջ համաձայնութիւն մը կնքած են՝ խոստանալով իրարու օգնել բնական աղէտներու պարագային:

Համաձայնութիւնը կնքած են Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Շիւքրի Սինա Կիւրէլի եւ Յունաստանի արտաքին գործոց նախարար ձորձ Փափանտրէու, ինչպէս նաեւ ՄԱԿի շտապ օժանդակութեան հարցերու պատասխանատու Քենչո Օշիմա:

Օշիմայի մէկ խորհրդակցանք յայտնած է, որ ՄԱԿ թեքնիք բնութի խորհուրդներ տուած է եւ անիկա դերակատարութիւն պիտի ունենայ համաձայնութեան թիւղ մարդասիրական ապագայ որեւէ գործողութեան:

Այլ պարագայումով մը, երկու երկիրներուն պաշտպանութեան նախարարները Երկուշաբթի օր Պոլսոյ մէջ յայտարարած են, որ մօտ ատենէն հեռաձայնային յատուկ գիծ մը պիտի բանան՝ փոխադարձ վստահութեան հաստատման համար առնուելիք քայլերու ծիրէն ներս:

Յունաստանի պաշտպանութեան նախարար Եաննոս Փափանտրիս Պոլսոյ մէջ կայացած ժողովի մը, որուն մասնակցած են նաեւ Պուլկարիայի եւ Ռումանիայի նախարարներ, յայտնած է, որ յատուկ գիծը «յարուածութեան կանխարգիլման պիտի նպաստէ»:

Անոր թուրք գործակիցը՝ Սապահաթթին Չաքմաքոլլու, ըսած է, որ գիծը թելադրուած է ՕԹԱՆԻ պաշտօնատարներու կողմէ:

ԱՆԳԱՐԱ ՊԻՏԻ ԶԿԱՐԵՆԱՅ Ե. ՄԻՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄԱ ԿՅՈՒԹԵԱՆ ԲԱՆԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԹՈՒԱԿԱՆ ՄԸ ԱՊԱՀՈՎԵԼ

Թուրքիոյ ձախակողմեան Ժողովուրդին Հանրապետական Կուսակցութեան ղեկավարը երէկ յայտնած է, որ Թուրքիոյ համար դժուար պիտի ըլլայ մինչեւ 2002ի արարք, Ե. Միութեան անդամակցութեան առնչուող բանակցութեանց սկսելու համար թուական մը ապահովել:

Անգարա ամէն ձեւով կը փորձէ թուական մը ապահովել բանակցութեանց սկսելու համար՝ Դեկտեմբերին Քոփէնհակըմի մէջ կայացալիք Միութեան վեհաժողովին՝ յայտնելով, որ Օգոստոսին վաւերացում մարդկային իրաւունքներու մարզով վերաբերեալ բարեկարգումները Ե. Միութեան չափանիշներուն համապատասխան են:

Սալպուրիկի մէջ կայացած Երոպական Տնտեսական Համաշխարհային ֆորումի ժողովին, մամլոյ ասուլիսի մը ընթացքին Տեմիզ Պաշքալ յայտնած է, որ Քոփէնհակըմի մէջ թուական մը ապահովելը շատ դժուար պիտի ըլլայ:

Պաշքալի կուսակցութիւնը Օգոստոսին քաջալերուած էր, երբ տնտեսութեան նախարար Քեմալ Տերվիշ կուսակցութեան միացած էր: Հարցախոյզները ցոյց կու տան, որ կուսակցութիւնը երկ-

րորդ դիրքի վրայ կը գտնուի Արդարութեան եւ Բարգաւաճման Կուսակցութեան (ԱԶՓ) ետք:

Անիկա, բացի ԱԶՓէն, միակն է, որ հաւանակամութիւնը ունի քուէներու 10 առ հարիւրը ապահովելու եւ

խորհրդարան մտնելու: Ե. Միութիւնը յայտնած է, թէ կ'ուզէ, որ մարդկային իրաւանց մարզի բարեկարգումները գործադրուին, նախքան բանակցութեանց համար թուականի մը ճշդումը:

Շար.՝ Էջ 3

ՆԻՒ ԵՈՐՔԻ ՄԷՋ

ՕՍԿԱՆԵԱՆ ՏԵՍԱԿՑԵՑԱԻ ԿԻՐԷԼԻ ԵՒ ԽԱՐԱԶԻԻ ՀԵՏ

Հայաստանի արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեան, որ Նիւ Եորքի մէջ մասնակցեցաւ ՄԱԿի ընդհանուր ժողովի 57րդ նստաշրջանին, հանդիպում ունեցած է Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Շիւքրի Սինա Կիւրէլի հետ:

Նախարար Օսկանեան կարեւոր նկատած է հայ եւ թուրք պաշտօնատարներու միջեւ հանդիպումներու շարունակականութեան ապահովումը: Կողմերը քննարկած են Թուրքիա - Հայաստան երկկողմանի յարաբերութիւններու բացակայութեան հիմնական պատճառները, խոչընդոտները եւ անոնց յարթահարման հնարաւոր ձեւերը: Անոնք նաեւ անդրադարձած են Էտնային Դարաբաղի տագնապին եւ շրջանային այլ հարցերու:

Նախարար Օսկանեան նաեւ հանդիպում ունեցած է իր իրանցի պաշտօնակիցին Քամալ Խարապիի հետ: Քննարկուած է Իրան - Հայաստան կապատարի շինութեան եւ Էտնային Դարաբաղի տագնապին առնչուող հարցերը:

Վարդան Օսկանեան Սեպտեմբեր 16ին հանդիպումներ ունեցած է Պուլկարիոյ, Լիբանանի եւ Չուիցերիոյ արտաքին գործոց նախարարներուն հետ: Ան նաեւ հանդիպումներ ունեցած է Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Երոպայի եւ Եւրասիական հարցերու գծով խորհրդական Էլիզապէթ ձորձի ինչպէս նաեւ ԵԱՀԿի Մինսքի խմբակի անդիակցի նախագահ Ռուտուլֆ Փիրենայի հետ:

ՔՈՉԱՐԵԱՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԹԵԺԱՏՏԵՆ

ԶԱՒԱԽՔԱՀԱՅՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԱՐ ԲՆՆԱՐԿՈՒՄԻ ԱՌԱՐԿԱՅ



Հայաստանի նախագահ Ռոպրթ Քոչարեան երէկ ընդունեց Վրաստանի պաշտպանութեան նախարար Դաւիթ Թեւեզաժէի գլխաւորած պատուիրակութիւնը: Հանդիպումին ընթացքին քննարկուեցան Հայ - Վրացական յարաբերութիւններուն եւ յատկապէս պաշտպանութեան բնագաւառէն ներս ճամադորձակցութեան վերաբերող հարցեր: Թեւեզաժէի կարծիքով, այդ յարաբերութիւններուն զարգացման առումով կարեւոր դեր ունեցած է Հայաստանի պաշտպանութեան կատարած պաշտօնական այցելութիւնը: Անդրադառնալով շրջանային հարցերու՝ կողմերը շեշտեցին Հարաւային Կովկասի մէջ տնտեսական համագործակցութեան զարգացման կարեւորութիւնը: Վրաստանի պաշտպանութեան նախարարը ներկայացուց նաեւ Փանքիսի կիրճին շուրջ վերջին զարգացումները: Ան նախագահ Քոչարեանի յանձնեց այս հարցին վերաբերեալ Վրաստանի նախագահ Էտեւարտ Շեւարճեանի նամակը:

Դաւիթ Թեւեզաժէի գլխաւորած պատուիրակութիւնը նաեւ այցելեց Հայաստանի վարչապետ Անդրանիկ Մարգարեանի: Երկու երկիրներու յարաբերութիւններու մասին մտքերու փոխանակման կողմէն քննարկուեցան նաեւ Զաւաթի հարցը: Վարչապետ Մարգարեան, մտահոգութիւն յայտնելով ջաւախքահայութեան ընկերային անպատասխան վիճակին մասին վերստին հաստատեց Հայաստանի ցանկութիւնն ու պատրաստակամութիւնը՝ մասնակցելու Զաւաթի ընկերային - տնտեսական զարգացման

Շար.՝ Էջ 3

ՊԱՔԱՆՈՐԵԱՅԻ Բ. ՇՐՋԱՆԸ

Պաքալորեայի պետական քննութանց երկրորդ շրջանը երկ սկսաւ ապահովական խիստ միջոցառումներու եւ հանդարտ մթնոլորտի մէջ:

Պեքալի նահանգապետ Անթուան Սլէյման շրջեցաւ քննութանց պաշտօնական կեդրոնները եւ աշակերտներուն ուղղեց հարցումներ քննութան հարցարաններուն մասին: Սլէյման ապա յայտնեց, որ բոլոր աշակերտներն ալ ըսած էին, թէ դիրին հարցումներ տրուած են քննութան այս երկրորդ առիթին:

Սլէյման յայտնեց նաեւ, որ ուսումը շատ անհրաժեշտ է եւ կը գերազանցէ միւս բոլոր մարզերը: Ան նաեւ կոչ ուղղեց պետական ուսուցիչներուն, որոնք պիտի վերադին քննութանց արագրութեամբ, անգամ մը եւս չդիմել գործադուլի եւ անմիջապէս արագրելու քննութիւնները՝ տէր կանգնելով իրենց ազգային պարտականութեան:

ԱՆԳԱՐԱ ՊԻՏԻ ԶԿԱՐԵՆԱՅ ...

Շարունակուած Ա. Էջէն

Ե. ՄԻՈՒԹԻԷԸ ԿՐՆԱՅ ԿԻՊՐՈՍԸ ԴՈՒՐՄ ՊԱՇՏԵԼ ԸՆԴԱՐՁԱԿԱՆ ՅԱՌԱՋԻԿԱՅ ԲԱՅԼԵՆ

Միւս կողմէ, Պրիստի մէջ դիւանագետներ երկ յայտնած են, որ Ե. Միութիւնը յառաջիկայ ամիս կրնայ Կիպրոսը դուրս պահել թէկամածու պետութիւններու ցանկէ մը՝ խաղաղարար ճուրջ բանակցութիւններ չհանգարելու առաջադրանքով:

Ե. Միութեան ղեկավարները դիմում մերկայացուցած 10 երկիրներու ցանկի մը համաձայն պիտի տան սկզբունքով, երբ Հնդկաստանը 24 - 25ին, Պրիստի մէջ ժողով գումարնէ: Դեկտեմբերի վեհաժողովին նշուելիք երկիրները, որոնց կարգին պիտի ըլլայ Կիպրոսը, 2004ին Ե. Միութեան պիտի անդամակցին:

Թէն միջազգային ճանաչում ունեցող յոյն կիպրական կառավարութիւնը անհրաժեշտ ընթացքի մէջ է՝ իր տնտեսութիւնն ու օրէնքները պատրաստելու համար Ե. Միութեան անդամակցութեան, սակայն անիկա նաեւ ՄԱԿի հովանաւորութեամբ բանակցութիւններ կը տան թուրք կիպրացիներուն հետ:

Յունաստանի արտաքին գործոց նախարարութեան բանբերը՝ Խրիսթոս Փրոքոփափաս, Աթէնքի մէջ թղթակիցներու յայտնած է, թէ Ե. Միութեան ընդարձակումը «Կիպրոսի համրապետութեամբ կը սկսի: Այս դիրքորոշումը մինչեւ վերջ պիտի պաշտպանենք», շեշտած է ան:

(ՌՈՅԹԸՐԸ)

ԼՐԱՏՈՒՌԹԵԱՆ ՕՐԵՆՔԸ ԲԱՐԵՓՈՒՆՈՒՄԻ ԿԸ ԿԱՐՕՏԻ

Կ'ԸՍԵ ԱՐԻՏԻ

Տեղեկատուութեան նախարար Դալի Արիտի երէկ խմբագիրներու սենտիքայի կեդրոնատեղիին մէջ սենտիքայի խորհուրդին հետ տեսակցութեան մը ընթացքին ըսաւ. «Բոլորս պետք է աշխատինք չուգահեռաբար անբախտելու թէ ազգային միասնութիւնը, թէ խօսքի ապաստիւնը, որովհետեւ անոնք Լիբանանի գոյութեան իմաստն են եւ հիմնական գրաւը մտաւորականներու եւ ապա մամուլի խելահասութեան ու բանականութեան վրայ կը դրուի»:

Արիտի սենտիքայի նախագահ Մըլիէմ Քարաւի վերընտրութիւնն ու սենտիքայի խորհուրդի ընտրութիւնը շնորհաւորելով, ընդգծեց, որ նախարարութիւնն ու սենտիքաները մէկ ընտանիք են եւ կը ծառայեն լրատուութեան:

«Էմ. Թի. Վի.»-ի գծով կեցուածք չէմ փոխած եւ հաստատ կը մնամ անոր վրայ, բայց մաքի առիթներով կրկնած եմ պայն, իսկ Միացեալ Նահանգներու կողմէ մեզի ապաստութեան մասին տրուած դասերը մերժելով՝ ինքզինքս հակասած չեմ ըլլար, որովհետեւ այլ հարց է», ըսաւ ան:

2003 տարուան պետական պիտեմի նախագիծին մասին՝ Արիտի ըսաւ, որ նկատողութիւններ ունէր մէքանիքի, հեռաձայնի, երկրագործութեան, Լիբանանեան համալսարանին եւ պետական պաշտօնէաներու աշխատանքի ծամերու յաւելումին գծով, եւ պանտք ներկայացուցած է կառավարութեան ծողովին:

«Լսատեսողական լրատուութեան օրէնքը բարեփոխումի կը կարօտի, ճիշդ է, բայց անկա չի նշանակեր, որ մինչեւ բարեփոխում պարտաւոր չենք գործադրելու օրէնքը», ըսաւ Արիտի՝ հաստատելով, որ կարգ մը լրատուական հաստատութիւններ սխալներ գործած են եւ ինք ստիպուած եղած է կեցուածք որդեգրելու սանձելու համար այդ ընթացքը:

ՋԱՄԱԽՔԱՀԱՅՈՒԹԵԱՆ ՀԱՐՅԵՐԸ...

Շարունակուած Ա. Էջէն

Ժրգիրներու մշակման ու իրագործման: Ստանալով վրացական պատուիրակութեան հաւաստիացումները, թէ իրենք նոյնքան շահագրգիռ են Ջաւախքի բնակիչներու կենսամակարդակի բարելաւման հարցով, Հայաստանի վարչապետը ընդգծեց, որ երկուստեք կատարուող հաւաստիացումներէն պէտք է անցնել գործի, կանխելու համար լարուածութեան յառաջացումը եւ հարցերու շահագործումը:

Դաւիթ Թեւեզտոն, իստեղով Ջաւախքէն ուսական խորհրդի ղեկավար ընտրուած մասին, դիտել տուաւ, որ Վրաստանի մէջ ոչ ուսական եւ ոչ ալ որեւէ այլ երկրի գինուորական ներկայութիւն պէտք չէ ըլլայ: Ան նաեւ տեղեկացուց, որ Նոյեմբերին Փրակայի մէջ կայանալիք ՕԹԱՆի վեհաժողովին ընթացքին Վրաստանի նախագահ էտուարտ Շեւարտնանի պիտի յայտարարէ ՕԹԱՆի անդամակցելու իր երկրին ցանկութիւնը:

Վրաստանի պաշտպանութեան նախարարը երէկ նաեւ այցելեց Միտեռնակաբերդ եւ յարգանքի տուրք մատուցեց 1915ի Եղեռնի զոհերու յիշատակին:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՇԵՐՈՅԻԿ

Համազգայինի Կեդրոնական Վարչութիւնը կը յայտարարէ, որ Նշան Փալանճեան ձեմարանի ուսանողական գիշերօթիկ բաժնին մէջ մնացած են սահմանափակ թիւով սեներակներ, որոնք տրամադրելի են ուսանողներու:

Փալանճեանը կը խնդրէր կապ հաստատել հետեւեալ թիւերուն եւ կամ անձամբ ներկայանալ Համազգայինի Կեդրոնական Վարչութեան գրասենեակ, Նշան Փալանճեան ձեմարան:

Շեռնաձայնի թիւեր՝ 01 - 372455, 01 - 375409 եւ 03 - 549917

E - mail Hamazcen@cyberia.net.lb

ՆՈՒՌԻՅԻՆ ՓՈՒՆԵՐՍԵՍ

ԱՐԱԳ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՆ ՈՐԱԿԱՒՈՐ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ

Չեր ուրախ առիթներու լուսանկարները տպեցէք ճոր հասած ԱՐԴԻԱԿԱՆ DIGITAL մեքենայի միջոցով, որակաւոր եւ զանազան չափերով: Ստանձնում՝ 20 վայրկեանէն:

Լուսանկարները կարճատեւ կարճատեւ CDի եւ կամ FLOPPY տիպէներու վրայ:

Cameraներու ձոյն հաւաքածոյ, ալպոմներ եւ նկարի շրջանակներու ըմտիր տեսակցումի:

Կը ստանձնենք ուրախ առիթներու photo նկարահանումը, արդիական մեքենաներով եւ յարմարագոյն գիներով:

Պրոֆ Կամուտ, Քաղաքապետարանի փողոց, «Սանթրո Արի»-ի դիմաց: Շեռ. 01 - 261858 եւ 01 - 255992:

السفير | السفير | السفير | السفير | السفير

السفير | السفير | السفير | السفير | السفير

17 Սեպտեմբերին տեղական մամուլը գլխաւորաբար լուսարձակի տակ առած է Ուսպանիի ջուրերու հարցին վերաբերող իրադարձութիւնները, Միացեալ Նահանգներու կողմէ Իրաքի ուղղուած սպառնալիքները եւ Քըրէնթ Շահուանի հանդիպումին առնչուող արձագանքները:

«Միացեալ» օրաթերթը գրած է. «ՄԱԿ կը պարզակցի Լիբանանի Ուսպանիի ջուրերուն գծով անոր իրաւունքներուն վերաբերեալ. որոշ շրջանակներ հարցականի տակ կ'առնեն ամերիկացի մասնագետներուն առաքելութեան յետին նպատակները»:

Ըստ «Պայրաք»-ի, ամերիկեան պատուիրակութիւն մը Ուսպանիի ակին մօտ իր քննութիւնները կատարեց. քննիչներուն տեղեկագիրը պիտի ամբողջանայ Միացեալ Նահանգներէն գալիք հիմնական մասնագետին ժամանումէն ետք: Թերթը նաեւ նշած է, թէ ջուրերու հարցով Լիբանան կը ջանայ լուծում մը գտնել ՄԱԿի շրջանակներուն մէջ միեւնոյն ստեն բարեկամ երկիրները իրականութեան տեղեկ պահելով:

«Նահար» գրած է, թէ նախագահ Լահուտ եւ վարչապետ Հարիրի կը հաւատան, որ ջուրերու հարցով Լիբանան պաշտօնական «մէկ եւ միացեալ» կեցածք ունի: Ըստ թերթին, Լիբանան ամերիկացի մասնագետներուն առաքելութիւնը կը դիտէ բարեկամ երկիրներու նկատմամբ առնուած քայլերու ծիրին մէջ:

«Քիֆահ Արապի» նշած է, թէ ամերիկացի մասնագետներ քննական այցելութիւն մը տուին Ուսպանիի ակին, իսկ այլ մասնագետներ պիտի հասնին վաղը: Ուսպանի կը յայտնէ, որ այս աշխատանքը կ'ընթանայ Իրաքի եւ Լիբանանի հետ գործակցաբար: Թերթը նաեւ լուսարձակի տակ առած է այն իրողութիւնը, թէ սահմանի կապուող Գիծին նման ողորդեալ, ՄԱԿ «ջրային կապուող գիծ» մը հաստատելու հարաւի մէջ:

«Մուսթապալ»-ի համաձայն, Ասէմ Քանուս ըսած է, թէ ամերիկացի քննիչներուն այցելութեան առնչուող քննադատական մօտեցումներ Տն Քիշոթեան են: Ըստ թերթին, Ուսպանիի հարցին վերաբերեալ ամբողջական համաձայնութիւն կը տիրէ Լահուտի եւ Հարիրիի միջեւ:

Շար.՝ էջ 9

ԱՅԿԻԼ AFHIL

ԲԺՇԿԱԿԱՆ ՏՆԱՅԻՆ ՍԱՐՔԵՐՈՒ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՆ

RENT AND SALE

AT HOME

- Wheelchair
- Walker
- Electric Bed
- Manual Bed
- Water Mattress
- Cans
- Sticks
- Serum Tripod
- Walking Frame

HOME MEDICAL EQUIPMENT SERVICES

- Over Bed Table
- All Kinds Of Oxygen
- We Also Provide
- Laboratory services
- Physiotherapist
- Nurses Aids
- P.T.S. (AMBULANCE)

ՑՈՒՑԱՐԱՐՈՒՄ «ԱՐԻՆ» ՍԵՆՁԵՐ ԳՐԱՍԵՆՆԱԿ՝ ԱՅԿԻԼ, ԱՅԿԵՏ ԸՆԵ, Բ. ՅԱՐԿ Շեռ. (01) 242556/7

NO MATTER WHAT YOU NEED... OR WHERE YOU NEED.

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՇԵՐՈՅԻԿ

Համազգայինի Կեդրոնական Վարչութիւնը կը յայտարարէ, որ Նշան Փալանճեան ձեմարանի ուսանողական գիշերօթիկ բաժնին մէջ մնացած են սահմանափակ թիւով սեներակներ, որոնք տրամադրելի են ուսանողներու:

Փալանճեանը կը խնդրէր կապ հաստատել հետեւեալ թիւերուն եւ կամ անձամբ ներկայանալ Համազգայինի Կեդրոնական Վարչութեան գրասենեակ, Նշան Փալանճեան ձեմարան:

Շեռնաձայնի թիւեր՝ 01 - 372455, 01 - 375409 եւ 03 - 549917

E - mail Hamazcen@cyberia.net.lb

ՆՈՒՌԻՅԻՆ ՓՈՒՆԵՐՍԵՍ

ԱՐԱԳ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՆ ՈՐԱԿԱՒՈՐ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ

Չեր ուրախ առիթներու լուսանկարները տպեցէք ճոր հասած ԱՐԴԻԱԿԱՆ DIGITAL մեքենայի միջոցով, որակաւոր եւ զանազան չափերով: Ստանձնում՝ 20 վայրկեանէն:

Լուսանկարները կարճատեւ կարճատեւ CDի եւ կամ FLOPPY տիպէներու վրայ:

Cameraներու ձոյն հաւաքածոյ, ալպոմներ եւ նկարի շրջանակներու ըմտիր տեսակցումի:

Կը ստանձնենք ուրախ առիթներու photo նկարահանումը, արդիական մեքենաներով եւ յարմարագոյն գիներով:

Պրոֆ Կամուտ, Քաղաքապետարանի փողոց, «Սանթրո Արի»-ի դիմաց: Շեռ. 01 - 261858 եւ 01 - 255992:

BYBLOS INSTITUTE TECHNICAL INSTITUTE

TECHNICAL BACCALAUREAT - BT SUPERIOR TECHNICAN - TS

- Computer & Accountancy
- Sales & Commercial Relationships
- Electronics
- Car Mechanics
- Preschool Education
- Expert Accountant
- Computer Science
- Business Administration & Marketing

SPECIALIZATION TECHNOLOGY - TDS

- General Accountancy
- Chief accountant
- Executive secretary
- Esthetics & Make-up
- Computer Technology
- Electronics (T.V. & Cellular)
- Mechanics & Car Electronics
- Car Diagnostics Technology
- Electricity - Refrigeration

Haret Horelk 01 273863 Dora 01 894600 Furn-El-Cheback 01 293175

Ազգային Իշխանութեան Ուսումնական Խորհուրդը, նկատի ունենալով տնտեսական պայմանները եւ հայ մանուկը իր հարազատ միջավայրին մէջ մնալու եւ մեծնալու անհրաժեշտութիւնը, որոշած է՝

ՍԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԵՒ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԻ ՍԱԿԵՐԸ՝

Մուտք / զանազանք 180,000 Լ.Ո. Կրթաթոշակ 390,000 Լ.Ո.

Հետեւեալ վարժարանները կը կիրարկեն վերոյիշեալ սակացոյցը.

ԱԶԳԱՅԻՆ ԱԲՍՈՐ ԳԱՍԱՐՃԵԱՆ ՎԱՐՃԱՐԱՆ, ՆՈՐ ՄԻՍ ԱԶԳԱՅԻՆ Ս. Զ. ՄԱՆԿԱՆՑ ՎԱՐՃԱՐԱՆ, ՆՈՐ ՄԱՐԱՇ ԱԶԳԱՅԻՆ ԱԲԳԱՐԵԱՆ ՎԱՐՃԱՐԱՆ, ԹՐԱՍ

ԱԶԳԱՅԻՆ ՈՒՐԲԵՆԵԱՆ ՎԱՐՃԱՐԱՆ, ՈՂՄԵՅԼ ԱԶԳԱՅԻՆ ՅԱՌԱՋ ՎԱՐՃԱՐԱՆ, ԱՅՆՃԱՐ ԱԶԳԱՅԻՆ ՆՈՒՊԱՐԵԱՆ - ԽՐԻՍՏԵԱՆ ՎԱՐՃԱՐԱՆ, ԹՐԻՓՈԼԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՀԱՅ ՄԵԾ ԳԵՐԴԱՍՏԱՆՆԵՐ

Խորասանեաններու հին եւ մեծ գերդաստանը, որ ճանչցուած էր իրրեւ արհեստաւորներու ու արուեստագէտներու սերունդ, 1915ի Մեծ Եղեռնին բազմաթիւ զոհեր տուաւ, կոտորակուեցաւ, բայց, միւս կողմէ, գործօն մասնակցութիւն բերաւ կամաւորական շարժման, իսկ յետեղեռնեան շրջանին անոնք ցրուեցան եւ տարբեր երկիրներու մէջ բնակութիւն հաստատեցին:

ԱՐՀԵՍԱՒՈՐՆԵՐ

Խորասանեաններու Բարաղամեան ճիւղէն Մկրտչի եւ զաւակը՝ Յովհաննէս ԺԹ- դարու վերջաւորութեան գինեգործութեան արհեստը ներմուծեցին Թումարզա ու զարգացուցին զայն: Անոնք էվերէկէն եւ Տեւրուէն մեծ քանակութեամբ խաղող եւ չամիչ կը ներմուծէին եւ գինի ու օղի կը պատրաստէին: Մտաւոր տուեալներով, տարեկան աւելի քան չարիւր մեծ կարաս գինի եւ վաթսուէն եօթնասուն կարաս օղի կը պատրաստէին ու կը վաճառէին: Անոնց գինին ու օղին փնտուած էին Հարասանիքներու եւ տօներու ժամանակ, իսկ Հարասան ընտանիքներ ու աղաներ անոնց պատրաստած գինիով ու օղիով կը հիւրասիրէին:



Օսմանեան բանակի զինուոր Գրիգոր Խորասանեան

ճաւ:

ՊԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

Խորասանեանները, որոնք արհեստաւորներ, արուեստագէտներ եւ քանիմաց մարդիկ էին, հինէն ի վեր կապ ունէին արտաքին աշխարհին հետ եւ անոնցմէ անհատներ կամ ընտանիքներ եղած են Պոլիս, Իզմիր, Սեբաստիա եւ Երուսաղէմ, նաեւ՝ Կեսարիոյ շրջակայ բնակավայրերու մէջ:

Յատկապէս օսմանեան 1908ի սահմանադրութենէն ետք, երբ ղէպի Ամերիկա արտագաղթը ընդհանրացաւ, Խորասանեաններէն քանի մը երիտասարդներ մեկնեցան «Նոր Աշխարհ»՝ դրամ չահելու, խնայելու եւ իրենց ընտանիքներուն օգնելու նպատակով. անոնք ընդհանրապէս բնակութիւն հաստատեցին Ռէյսի մէջ, եւ գործարաններու մէջ աշխատանքի մտան: Հոն էին արդէն իրենց համագաւառացի ուրիշ պանդուխտներ:

ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՏԱՐԻՆԵՐՈՒՆ

1915ի Մեծ Եղեռնի օրերուն Թումարզացիք բռնագաղթի ենթարկուեցան ղէպի սուրիական անապատներ: Խորասանեաններէն շատեր զոհ գացին ջարդին ու սովին, յատկապէս՝ Շէյխ Միսրիսի շրջանին մէջ, ուր անոնցմէ ամբողջ ընտանիքներ ջնջուեցան:



Ամերիկայի Խորասանեաններու նախապետներու Եղիա Խորասանեան

Ամերիկայի Խորասանեաններու նախապետներու Եղիա Խորասանեան 1917ին կամաւոր արձանագրուեցան Արեւելեան Լեգէոնին եւ Ֆրանսա, Փոր Սոյիտ, Կիպրոս եւ յետոյ ալ Պաղեստինի ճակատ փոխադրուելով՝ 19 Սեպտեմբեր 1918ին մասնակցեցան Արարիկի ճակատամարտին, իսկ աշնան կամաւորներուն հետ Կիլիկիա մտնելով՝ կռուեցան տարբեր ճակատներու վրայ:

Պուլկարիա հաստատուած կարապետ Խորասանեան 1914ին կամաւոր արձանագրուեցաւ եւ 1915 Յունուարին կազմուած ու Գրիգոր Աւարեանի հրամանատարութեան տակ գործող եւ 400 հոգիէ բաղկացած կամաւորական Զ. գունդին մէջ մտնելով՝ կովկասեան

ԽՈՐԱՍԱՆԵԱՆՆԵՐՈՒ ԳԵՐԴԱՍՏԱՆԸ ԹՈՍԱՐՁԱՅԵՆ ԵՒ ԿԵՍԱՐԻԱՅԵՆ՝ ԴԵՊԻ ՏԱՐԲԵՐ ԵՐԿԻՐՆԵՐ

ճակատ մեկնեցաւ ու երկրորդ հարիւրեակին մէջ յիսնապետ եղաւ: Զ. գունդը 1915 Մայիսին ճամբայ ելաւ եւ 8 Յունիսին Բասենի ճակատ հասաւ: Սկսաւ կատաղի գոտեմարտ մը. թրքական բանակը, թնդանօթներով անխնայ ուժեղացնելով իրենց հետք, յարձակումի անցաւ, բայց չյաջողեցաւ նահանջի մատնել կամաւորները, որմէ ետք հայերը երեք անգամ գրոհելէ ետք յաջողեցան ճեղքել թրքական դիրքերը ու նահանջի մատնել զանոնք: Կարապետ Խորասանեան քաջարար կռուեցաւ այս ճակատամարտին եւ իր գինեակիցներուն հետ յաջողող օրերուն ու շարաթներուն գրաւեց թրքական քանի մը դիրքեր ու գիւղեր: Այնուհետեւ ան մտաւ Անդրանիկի կամաւորական Ա. գունդին մէջ՝ իբրեւ հեծելազունդի գինուոր եւ կռուեցաւ բոլոր ճակատներուն վրայ:

ՎԵՐԱԳՐԱԶ ԴԵՊԻ ԲՆՈՐԻԱՆ

Առաջին Աշխարհամարտի աւարտէն ետք Կիլիկիոյ, Թումարզայի, Կեսարիոյ եւ այլ շրջաններու բռնագաղթուած եւ վերապրած հայութիւնը, որոնց շարքին՝ Խորասանեանները, 1919ին վերադարձան իրենց բնակավայրերը եւ ձեռնարկեցին իրենց աւերուած բնակարաններու վերակառուցման:

Բայց հազիւ վերադարձած ու տեղաւորուած՝ Անատոլիի մէջ ծայր տուաւ Մուսթաֆա Քեմալի ազգայնական շարժումը՝ անգամ մը եւս մտահոգութեան ու սարսափի մատնելով հայութիւնը:

1920 Յունուարին թուրքեր յարձակեցան Մարաշի հարկական թաղերուն վրայ եւ անխրնայ սկսան կրակի տալ զանոնք. մարաշցիք եւ հոն գտնուող կամաւորները դիմադրութիւն ցոյց տուին: Թորոս Հայտարեան, որ իբրեւ կամաւոր մասնակցած էր Արարիկի եւ Կիլիկիոյ ճակատի կռիւներուն եւ այդ օրերուն Մարաշ կը գտնուէր, մեծ քաջագործութիւններ գործեց՝ գործօն դերակատարութիւն ստանձնելով դիմադրական կռիւներուն մէջ: 11 Փետրուարին, Ֆրանսացիներու նահանջէն ետք, ձիւն ու սառնամանիքին, խուճապահար փախուստի դիմեց քաղաքի հայութիւնը՝ ճամբան ամէնուրեք յարձակման ենթարկուելով չեթէներուն կողմէ: Թորոս Հայտարեան գաղթի ճամբուն վրայ պաշտպան կանգնեցաւ փախստականներուն, իր կեանքին գնով ազատեց անկարներ եւ անոր շնորհիւ շատեր փրկուեցան ջարդէ:

ԲՈՆԵՎԱՆԹ ԹՈՍԱՐՁԱՅԵՆ

Կիլիկիոյ պարպումի օրերուն, 1921 աշնան, Թումարզացիք եւ անոնց շարքին՝ Խորասանեանները եւս բռնեցին գաղթի ճամբան, անցան Ատանա եւ Դեկտեմբերին անոնց մեծամասնութիւնը Լիբանան ցամաք ելաւ եւ Պէյրութի ծովեզերքայ Ատանա քէմիին մէջ տեղաւորուեցաւ: Սակայն Խորասանեաններէն քանի մը ընտանիքներ ու անհատներ, այլոց շարքին, մնացին Թումարզա եւ Կեսարիա:

Խորասանեաններէն քանի մը անձեր ու ընտանիքներ

ԽՈՐԱՍԱՆԵԱՆՆԵՐՈՒՆ ԳԵՐԴԱՍՏԱՆԵՐԸ

Խորասանեանները հիւնէն ի վեր եւ մինչեւ 1915ի Մեծ Եղեռնը բազմաճյուղաճախակա կազմակերպուած ընտանիքներով ապրած են. իւրաքանչիւր ընտանիք բաղկացած էր մինչեւ քաջի մը տասնեակ անձերէ՝ մեծ հայրեր, մեծ մայրեր, զաւակներ, թոռներ, ծոռներ, որոնք խմբուած էին մէկ օճախի շուրջ: Ծանցըւած էին իբրեւ ուշիմ, ձեռներեց եւ ստեղծագործ մարդիկ:

Թումարզայի Հայեկ թաղին մէջ կեդրոնացած Խորասանեանները քանի մը փողոցներու վրայ տարածուած էին. Հայեկի Խորասանեանները գլխաւոր, մայր ճիւղը կը նկատուէին: Անոնցմէ սերած ընտանիքներ Վերի թաղի Խորասանեաններու ճիւղը կը կազմէին. կային նաեւ Կեսարիոյ եւ Նիրքի ճիւղերը:

Խորասանեան գերդաստանէն ժամանակի ընթացքին երկու մեծ ճիւղեր կազմաւորուեցան՝ Հայտարեան եւ Բարաղամեան. Հայտարեան ճիւղէն սերած է Պալեան ընտանիքը, իսկ Բարաղամեանները իրենց կարգին Իպիշեան, Թեմիւրեան եւ Թիւֆէքեանները: Աւելի փոքր ճիւղաւորումներ են՝ Մամասեյան, Զընքըլեյան, Տիւրիւկեան, Տովիշեան, Մետուկեան, Պաթուրեան եւ Մեհեշեան:

Թեմիւրեան ընտանիքը ու Ենթա-ճիւղերու բաժնուած են անոնցմէ ոմանք տարբեր ազգացնուներով ցանցուած են, Խորասանեանները միշտ ալ պահած են իրենց գերդաստանական միութիւնը:

տանիքներ, որոնք Անատոլիի կողմերը կը մնային, թրքական ուժերու յառաջխաղացքի եւ յունական բանակի նահանջի պայմաններուն տակ խուճապահար փախչող հայութեան հետ իզմիր ապաստան գտան: 1922 Սեպտեմբերին թրքական բանակը գրաւեց Իզմիրը. բազմաթիւ հայեր ու յոյներ, որոնք չէին կրցած ծովու կամ ցամաքի ճամբով փախուստ տալ, մնացին: Նոյն օրերուն Սարգիս Խորասանեան եւ Եղիա Բարաղամեան գերի ինկան թուրքերուն ձեռքը եւ կողոպտուելէ, անօթի ծարաւ գիւղէ գիւղ թափառելէ եւ երկար ողբիսկանէ ետք յաջողեցան ազատի:

ԲԱՐՍԵՂ ԽՈՐԱՍԱՆԵԱՆ

Թումարզայի Հայեկ թաղի Խորասանեաններու նահապետական տան զաւակ էր Բարսեղ Խորասանեան. 1915ի տարագրութեան օրերուն, տակաւին պատանի, ընտանիքին հետ ճաշակեց գաղթականութեան բոլոր դառնութիւնները եւ անպատաններուն մէջ կորսնցուց շատ հարազատներ. եղբայրները՝ Եղիա եւ Սարգիս Ամերիկա գաղթած ըլլալով՝ փրկուեցան գաղթականութենէն: Անապատներուն մէջ թուրքեր փորձեցին Բարսեղի երկու աչքերը: Աչքազուրկ դարձած պատանին Եղեռնի արհաւիրքներէն ետք, 1920ին տարուեցաւ Հալէպի կուրանցը, ուր



Ջութակահար աչազուրկ Բարսեղ Խորասանեան

կոյրերու յատուկ ուշուցիկ գիրքով գրել կարող սորվեցաւ եւ տիրացաւ ջութակ նուագելու արուեստին: Այնուհետեւ Բարսեղ Հալէպի մէջ մնալուն բնակութեան հիմք դրաւ եւ բազմաճյուղ ընտանիք կազմեց. ան դարձաւ փնտուած ջութակահար:

ԽՈՐԱՍԱՆԵԱՆՆԵՐԸ ՏԱՐԲԵՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՄԵՋ

Մեծ Եղեռնէն ետք գաղթական դարձած Խորասանեանները գլխաւորաբար Լիբանանի, Միացեալ Նահանգներու, Արժանթինի եւ Պոլսոյ մէջ կեդրոնացան: Այսպէս.



Ամերիկեան բանակի զինուոր Սկրտիչ Խորասանեան

նաեւ Խորասանեանները՝ իրենց ճիւղաւորումներով: Հոն անոնք շարունակեցին իրենց դարաւոր ընտանեկան եւ ընկերային տոհմիկ կեանքը:

Լիբանանէն դուրս, Խորասանեաններ ամէնէն աւելի կեդրոնացան Միացեալ Նահանգներու մէջ, ուր տակաւին Առաջին Աշխարհամարտէն առաջ սկսած էին գաղթել:

